ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 837-Ա/2 **25.05.2021թ.**

ԿՐԱԿՈՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆԻՆ ՐԱՖՖԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Կրակովի միջազգային կինոփառատոնի կարճամետրաժ ֆիլմերի մրցութային ծրագրում ընդգրկված «Ժամանում» կարճամետրաժ ֆիլմի ռեժիսոր Ռաֆֆի Մովսիսյանի փառատոնին մասնակցությանն աջակցելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Կրակովի միջազգային կինոփառատոնի կարճամետրաժ ֆիլմերի մրցութային ծրագրում ընդգրկված «Ժամանում» կարճամետրաժ ֆիլմի ռեժիսոր Ռաֆֆի Մովսիսյանի փառատոնին մասնակցության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1056 Կինեմատոգրաֆիայի ծրագիր» «11005 Աջակցություն կինոարվեստին» միջոցառման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) նախատեսված գումարներից (տող՝ «Միջազգային կինոփառատոներին, կինոշուկաներին և կինոնախագծերին մասնակցություն») հատկացնել 739.8 հազ. (յոթ հարյուր երեսունինը հազար ութ հարյուր) դրամ՝ 2021 թվականին Կրակովի միջազգային կինոփառատոնին Ռաֆֆի Մովսիսյանի մասնակցության մասնակի ծախսերն ապահովելու համար:

3. Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության պետին՝

1) սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում նախապատրաստել և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարի ստորագրմանը ներկայացնել սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնելու մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

2) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել ֆինանսական հաշվետվությունների ընդունման և պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունների կազմման և ստորագրման գործառույթներ:

4. Նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 343-Ա/2 հրամանին և կնքվող պայմանագրին համապատասխան իրականացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ հսկողություն, բովանդակային հաշվետվությունների ընդունման գործառույթներ:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

(պաշտոնակատար)

X _____

Հավելված
ՀՀ կրթության,գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
----- ---------- 2021 թ.
N ------- հրամանի

ԾՐԱԳԻՐ

Կրակովի միջազգային կինոփառատոնի կարճամետրաժ ֆիլմերի մրցութային ծրագրում ընդգրկված «Ժամանում» կարճամետրաժ ֆիլմի ռեժիսոր Ռաֆֆի Մովսիսյանի փառատոնին մասնակցության

1	Կազմակերպության անվանում	«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	ք. Երևան, Տերյան 3ա
3	Ծրագրի անվանում	Կրակովի միջազգային կինոփառատոնի կարճամետրաժ ֆիլմերի մրցութային ծրագրում ընդգրկված «Ժամանում» կարճամետրաժ ֆիլմի ռեժիսոր Ռաֆֆի Մովսիսյանի փառատոնին մասնակցության
3.1	Բովանդակություն	Եվրոպական ամենահին և հեղինակավոր կինոփառատոներից Կրակովի 61-րդ ՄԿՓ-ն այս տարի տեղի է ունենալու մայիսի 30-ից հունիսի 6-ը: Կարճամետրաժ ֆիլմերի մրցութային ծրագրում այս տարի շուրջ 1800 ֆիլմից ընտրվել է նաև կինոռեժիսոր, կինոգետ Ռաֆֆի Մովսիսյանի «Ժամանում» ֆիլմը: Փառատոնի շրջանակում է տեղի ունենալու ֆիլմի համաշխարհային պրեմիերան: «Ժամանումը» հայկական առաջին ֆիլմն է, որն ընդգրկվել է Կրակովի մրցութային ծրագրում: Հայկական «Ժամանում» կինոնախագիծը ընդգրկված լինելով վերոնշյալ մրցութային անվանակարգում, հնարավորություն է ստեղծելու ֆիլմի ռեժիսորի համար մասնակցելու փառատոնի շրջանակում նախատեսված բոլոր հանդիպումներին, ինչպես նաև հնարավորություն կունենա գտնելու նոր կապեր ֆիլմի հետագա տարածման և նոր գործընկերներ հաջորդ կինոնախագծի համատեղ արտադրության համար:
3.2	Նպատակ	Կրակովի միջազգային կինոփառատոնի կարճամետրաժ ֆիլմերի միջազգային մրցութային ծրագրում ընդգրկված «Ժամանում» ֆիլմի ներկայացում, մամուլի ասուլիսի և հարցուպատասխաններին (Q&A) մասնակցություն, ֆիլմի հետագա տարածման ուղիների և նոր նախագծի հավանական համաարտադրողի որոնում:
3.3	Անցկացման ժամկետ	2021թ. մայիսի 30-ից հունիսի 6-ը

3.4	Անցկացման վայր	Կրակով, Լեհաստան
3.5	Ակնկալվող արդյունքներ	Ներկայացնել Կրակովի միջազգային կինոփառատոնի կարճամետրաժ մրցութային ծրագրում ընդգրկված «Ժամանում» ֆիլմը, մասնակցել ֆիլմի համաշխարհային պրեմիերային հաջորդող հարցուպատասխանին և մամուլի ասուլիսիսին, գտնել նոր հարթակներ ֆիլմի հետագա տարածման համար:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Կրակովի կինոփառատոնի շրջանակներում ռեժիսոր Ռաֆֆի Մովսիսյանի մասնակցությունը ֆիլմի հանրահռչակման համար նախատեսված բոլոր միջոցառումներին: «Ժամանում» ֆիլմի համաշխարհային պրեմիերա: Ակնկալվում է մոտ 250 հանդիսատես, փառատոնի մասնակիցներ և հյուրեր: